

ԱՐԱՐԱՅԻՄ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ


ԹԻԻ 125

13 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1913

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՔԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .— Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ . արծ . վեցամսեայ՝ 20 .— մէկ թիւ՝ 1 դհկ .— Արսասահ-
ման տար . ֆր . 10 . վեցամս . 5 .— Վճարմունք կանխիկ են :

ՀԱՍՏԷ .— Կաթողիկէ Առնագանգ, Բերա, 5 . Պայրամ փողոց 5, 4 .
Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ .— 1.— Առնագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ո ե է
յօդուած: 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին զրկել:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Առնագանգի Բերա, 5 Պայրամ փ . 5:
Տպարանս ըստ ամենայնի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպա-
գրական գործոց համար: Կը տպուին ամէն տեսակ ծանուցմունք,
գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարտեր, քարտ-ատրէաներ,
մահադրներ, եւն., եւն.: Գիրքերը անմեղքեղի կերպով աժան են:
Գեղեցիկատական ճաշակի և տպագրական մաքրութեան կող-
մանէ յաճախողները անտարակոյս գոհ պիտի մնան:



ԿԱԹՈՂՈՍԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹ-ԱԹ-ԵՐԹ-

Երրորդ տարի № 13 Դեկտեմբեր 1913 № Թիւ 125

«Սրբազան Բանաստեղծական Պիոս Ժ. կր մտաբերեալ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթաբերքը շաբաթական Կայաստանի կաթողիկէ ժողովրդոց՝ մէջ, մասնաւոր ի գումարու, փեկարար առաքելութիւն մը կա՝ տալէ, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մտաբանաց արդիւնաւորութեան համար Սրբազան Հայրն սրտագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողներն»:

Նամակ Կարգ. Մերի սէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօլոս Պետրոս Ժ. Թեոփիլ, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ 23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուտնամարտաւ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐ

ՆԱԻԱՍԱՐԳ

Ահա ձեզի գուտ հայկական անուն մը, ինչպէս կը կարծուի. անուն մը ազգային ամսոյ եւ ազգային հին ածականութեան. ուրեմն անուն մը՝ որ, ըստ ոմանց, ամէն Հայու սիրտը պէտք է տրոփեցնէ:

Նաւասարգ, հայ տարուան առաջին ամիսը, եւ զողիակոսի պէս իր ոսկեշող շրջըրջիկ կայտիւններովը՝ մերթ ծաղկազարդ բուրումնաւէտ գարնան, մերթ վարդավառ կամ բոնայիր մրգաբեր արփիներու անձնաւորութիւնն եղած է, տեսակ մը շարժուն Արիական Նեփրուզ:

Ազաթանգեղոս գրած ունի. «Ի ժամանակի դիցն ամանորաբեր նոր պսղոց տօնին.. յոր ուրախութեան Նաւասարգ անուր»:

Արի արքայն Տրդատ, երբ դեռ կռապաշտ եւ Հռոմէական արծիւներու յաղթ թեւերով հովանաւորուած մուտ գործեց ի Հայաստան, ու Երիզայ աւանին մէջ գոհեց Անահիտ չաստուածոյն մեհեանին մէջ, որ նոյն է Արամազդայ գուտար Արտեմիս կամ Տիանա դից հետ եւ զոր կռապաշտ Հայաստան կը պաշտէր իբրեւ աշխարհի պահապան, Տրդատ արքայ ընդ զինիս մտեալ, հրաման ըրաւ նաեւ Գրիգորի որ ծաղկեփունջ տանի նուիրէ Ոսկեմայր Անահտայ: Գրիգոր մերժեց: Անտի զայն ըրոյթ արքայական: Ապա ահաւոր տանջանք Գրիգորի եւ դարձ Արքային եւ ամենայն Հայոց՝ ի սուրբ կրօնս Բրիտանիէութեան:

Եւ ահա Նաւասարգ վերտառութեամբ հատոր մը երեւան եկաւ, իբր գրական

գեղարուեստական Տարեգիրք, որոյ Ա.ը կը կազմէ 1914 տարին: Այլեւայլ հայ գրողներուն անտիպ կտորները կը բովանդակէ, անսակ տեսակ պատկերներով: Տպագրութիւնը արուեստական, թուղթը գեղեցիկ:

Մենք ո՛չ պաշտօն ունինք, ո՛չ կ'ուզենք այդ հատորին ամբողջութեան վրայ քննադատութիւն մը ընել: Կնար է մէջը օգտակար կամ հետաքրքրական մի քանի յօդուածներ ալ ըլլան:

Բայց ինչ որ մենք կ'ուզենք ի վեր հանել, և ինչ որ մեզի հետ պիտի գատապարտեն ամէն անոնք որ կրօնի կամ բարոյականի զգացումն ունին կամ անոնց կարեւորութիւն մը կուտան՝ մանաւանդ այդ խեղճ ու ահագին մեծամասնութեամբ տգէտ հայ ազգին մէջ, — այն է՝ այդ հատորին առաջնորդող ոգին:

Այդ ոգին եռադէմ է. անկրօնութիւն, յուսահատութիւն և անբարոյականութիւն:

Ամենակարճ և ամենափաստացի առաջարկութիւն կը ներկայացնենք, կարկառուն և դրական ցուցադրութիւն:

Ներքին մեզ պատուական ընթերցողք՝ մէջքերումներու հաւատարմութիւնը, որով թէև աստուածապաշտ զգացումները մի քիչ պիտի վիրաւորուին. սակայն այդ մէջքերումներով պիտի մերկացնենք ամբարշտութիւնը ու պիտի սոսկացնենք բարիները ու պիտի ձաղկենք այսքան անխղճօրէն անկրօն մարդոց ինկարկու համամիտները:

Եթէ հայ ազգին մէջ ահաւոր մրցում մը սկսած չըլլար յանկրօնութիւն դիմելու գահավէժ. եթէ անուն մը ունեցող գրիչները առ այս չսատարէին դիւագորգի իրարանցումով մը. և եթէ՝ — այս ընթացքին ուրախ և անողոքելի և անխուսափելի հետեւութիւն, — անբարոյականութիւնը սոսկայի ծաւալ չառնուր անդարմանելի աւերներով, մեզ ի՞նչ փոյթ էր այս տեսակ սնօրէն գործոց վրայ խօսիլ կամ գրել. — բայց քանի որ այս պօզուի տեսարանին արտասուալից հանդիսատեսներ կ'ըլլանք, ձա՛յն պիտի բարձրացնենք, մեր պա՛րտքն է այդ.

մեր սրբազան պարտքն է մասնանշել աղէտը. կը կատարենք ուստի մեր պարտքը:

1. Նաւասարդ գրքին որսխտութեան համար՝ արդէն զոյգ հեղինակներուն — Վարուժանի և Սիրունիի, — և նմանեաց անուններն նախագուշակ կամ չարագուշակ կըրնային լլլալ. նաև յոռեգոյն ենթագրութիւն մը սխալած պիտի չըլլար:

2. Եւ չսխալեցաւ:

Ապաքէն Նաւասարդն առաջին էջէն իսկ կը բուրէ անաստուած ու կուսպաշտ հեթանոսութեան դժոխարոյր գարշելի խուսկը:

«Հանճարն Հայկեան» կը հրաւիրուի մշտնել ի «Մեհեանն Աստուածներուն» և բարձրացնել «Անահիթի ծիծերն ի վեր բաժակը նուր»: Անոր՝ Օգոստափառ (!) Զաւակներն պիտի կերտեն (եղեր) նոր Արեալոյս»:

Աւա՛ղ... ի՞նչ Արշալոյս:

Ահա անոնք կը դիմեն, Աղօթով մը առ Դիցունհին Անահիտ, առանց այլեւայլի. և կը խոստովանին թէ՝ «Մեղկութեան կրօններէն (այսինքն՝ Քրիստոնէութենէն !!) իրենց խիղցը լուացեալ են»:

Դաւանանք մըն ալ ունին. Ո՛վ Դիցունհի, կը հաւատամ ես ի Քեզ» (այսպէս՝ զլխաւորով):

Կը նուիրագործեն իրենց դիմումը. «Ուխտի կու գամ»:

Մէտեր ալ կը սարքեն, կը շռայլեն քուրմի, ընծաներու, արարողական զգեստուց և նիւթոց նկարագրութիւն. և ապա կը հառաչեն. «Քաղերւանդեան բլուրներէն հեքանոս կեանքը թո՛ղ հոսի»...:

Կը կասկածի՞ք, կը վարանի՞ք... վստա՛հ եղէք, չենք ստեր:

Արդէն այդ մարդիկը բացորոշ կը գրեն. տեսէ՛ք ի՞նչ կ'ըսէ այդ հեթանոսամիտ պուէտը:

Քասն դարու քու վրեժք թո՛ղ որ այսօր ես յուծեմ Ո՛վ Աստուածուհիդ Անահիթ: Ահաւա՛սի ես բազմեմ իրականումն սե՛զ նեցեցի

Իմ խորտակած խաչափայտիս երկու թւերը բուճաւոր, եւ ցնծա՛ դուն, ո՛վ Ոսկեմայր, Լուսաւորչի կողերէն ժաւն ոսկոր մը ինչ կը ծխեմ:

Կարծեմ հիմա կը սկսիք սոսկալու, փուշ

փուշ ըլլալու, և հնար է... կ'արտասուէք այսքան ճիւղային անօրէնութեան տուփը...

Այս մարդիկը սակայն, մեղմեցնեն(!) վերջը զՔրիստոնէութիւն, անխռով կը հալոյեն Անահիտէն որ «Ասուած մը պարգեւէ Հայութեան, անեղ Ասուած մը ծնանէ մեզ»...

Ո՛վ Հայութիւն, ո՛վ հայհոյութիւն...

Էջ 112, «Նոր Սարգիս» սրբապիղծ տառապանք, իր սիրելին մեռած տեսնող քերթողը, կը բացադանչէ առ Աստուածն Քրիստոնէից...

Տէ՛ր, մեռելի՛ս ստիկայ՝ ուրեքայ ի՞նչ յարեալ...
Տէ՛ր, կեանքի՛ս մէջ յոկո՞ւմ եւ արցունքի՛ս սեղծե՛ր...
Վի՛շ, որ կ'ըլլայ մեր իրիկը ու մեր կ'ընէ գիւ Ասուած...

Այդ իրիկի տակա՛ Տէ՛ր, զի դառնորիւնքս քակաւ Կ'ըլլայ անձի՛ մը դաժան...
Բաժանի այսօր եւ կը խմե՛մ իւր մահուան...

Հիմա կարծեմ, ո՛վ բարեպաշտ ընթերցող, հրակներուդ մէջ արիւնդ կը սառնի...

Բայց՝ Տանգէի նմանութեամբ, լա՛ց ու կարգա՛ սա հետեւեալն ալ...

Էջ 157 գրուած կայ...

Զուռի աշխարհն եկեղեցի ինձ համար,
Ոյ սուրբ պատկեր, ոյ խաչափայտ, ոյ Ասուած:
— Ես փնտնեցի հաւատք անգիմ, յոյս անմար.
Ու ամենն ինձ մի գեղեցիկ սուտ քաջ...
Հոգիս լցուեմ է անյուստեան մշուշով...
Սիրտս կ'զգայ՝ կեանքն ունայն է, բաղդը սուտ.
Ի՞նչ խօսքով եւ հոգով եւ արարչին:

Հայ երկնքի տակ տեսնուած է արդեօք այսքան սոսկալի ամպարշտութիւն... «Յայնժամ սկսանիցին ասել լեռանց՝ թէ անկերո՛ւմ ի վերայ մեր, եւ բլրոց՝ թէ ծածկեցե՛ք զմեզ:»...

Այս հատորին մէջ կ'երգուի նաեւ Տարփանքը, Հաճոյքը, Մերկութիւնը, միեւնոյն խելացնոր յիմարութեամբ... հո՛ս՝ մենք կը լռենք:

Այս հատորին մէջ, — քանդի գեղարուեստական կը յորջորջուի, — ճիշդ այդ տեսակ լպիրշ, անառակ ու մերկ պատկերներ կը խճողին, ամէն կողմը ցանուցիր, ինչպէս ճահիճներու մէջ կը վխտան թռչնաւոր սողուններ:

Ահա՛ հատորը...

Կ'արժէ՞ արդեօք կրկնել ու երեքիսել, Զոյուշացե՛ք և զոյուշացե՛ք...

*
* *

Բայց այս հատորը ուրիշ դորմանալի բոնն մէն ալ կը պարունակէ, անսկսկալ և օտարաշխարհայ և այլազգի (exotique et hétérogène) բան մը...

Մենք բնաւ պիտի չանդրադառնայինք այս կէտին վրայ, սակայն երբեմն զէպքերը դաժան են: Վերգիլ երգած է ջինջ երկնքի կայծակներն ալ...

Հաւատացեալ մը, — ուշ գրէ՛ք, ո՛չ թէ վրասկան մտադրման, այլ բացարձակապէս իրական դեպք մը կը պատմենք, — հաւատացեալ մը՝ ձեռքը բռնած այդ թռչնալից հաճոյքը, եկաւ մեզ ու ըսաւ...

«Ի՜նչպէս կ'ըլլայ որ այդպիսի հատորի մը մէջ Վենետիկոյ Միտիթարեան երեք Հայոց ստորագրութիւնը կրող երեք յօդուածներ կան»:

Առաջին անգամն էր որ այդ գիրքը կը նմենէինք: Արիւրեան մնացինք... բնականաբար:

Հսինք. «Այս Հայրերը յայտնի է որ չէին գլխեր թէ այդ տեսակ ամպարշտ և անպատկառ յօդուածներու քով ու լիտի նրկարներու դէմ պիտի դատուէին իրենք»:

Նա պատասխանեց. «Բայց միթէ յօրինողներուն անուններն իսկ չէին բաւեր նախազգուշացնելու զիրենք այդպիսի անորակ լի մատուցութենէն ու չփումէն: մահացու չեն միթէ այդ մտերմութիւնները: Զօրականներ կամ լաւ եւս պօրապետներ կուոյն ամենէն տաք ու տաքնապալից վայրկեաններուն ինչպէս կ'ըլլայ որ թշնամոյն բանակին մէջ կը գտնուին, նոյն իսկ իբրեւ պարզ ժամանց: Իրենց դատարարական աշակերտները իրենց անուանց ի չնորձ գոնէ, չպիտի կարգան այս սրբապիղծ հատորը... Դուք չէիք դառնադառն ողբացողները որ անխիղճ մարդիկ Ուսումնարանը, ըսել է՝ կաթողիկէ մատղաշ տղայոց սիրան ու հոգին, անկրօն Վարուժանի մը յանձնեցին... Արդէն մեր

կրօնաւորները մեկգի գրին կրօնական յօդ-
ուածներու, թերթերու, գրքերու հրատա-
րակութիւնը... միայն բանասիրականի և
ազգասիրականի կը նուիրեն իրենց սրբազան
գրամը, կարծես թէ Հայոց համար կրօնքը
պէտքի բան չըլլար կամ թէ հնար ըլլար
խնդում աչքով նկատել անկրօններուն ըրած
ահագին աւերները: Դուք չէ՞ք որ կը կրկ-
նէք Քրիստոսի խօսքերը. «Ձայս պարս եր-
աւունք և զայն չքողուլ»: Չէ՞ք տեսներ
ամբողջ կաթողիկէ աշխարհի կրօնաւորական
միաբանութիւնները, կղերները, նոյն իսկ
աշխարհականները. որոնք ամէնքը, ըստ օ-
րինակի Առաքեալներու և Սուրբերու, ոգի
ի բռին կ'աշխատին, կը քրտնին, անբաւ-
ծախքեր կ'ընեն կաթողիկէութիւնը, ման-
կութիւնը, երիտասարդները, հաւատքով եւ
բարոյականութեամբ, պաշտպանելու պահ-
պանելու համար, և ոչ թէ անօգուտ բա-
նաստեղծութեամբ կամ բանասիրութեամբ
կ'անցնեն բոլոր ժամանակներն: Չէ՞ք տեսներ
Դաշնակցականները, որոնք երգուընդած են
եւ ինչպէս կ'աշխատին կրօնքը իւելու Հա-
յոց մէջէն, նոյն իսկ Հայ եկեղեցականք և
նախկին պատրիարքներ կը սատարեն անոնց
այս աստուածամարտ կռուին մէջ, կեղծու-
պատիր ուրացումներով: Ո՞վ պիտի կոռւի,
գրաւոր պատեհազմն ո՞վ պիտի պատերազմի,
ո՞վ պիտի պահէ աւանդը... Ասոնք հոգին
տակը թաղուած քանքարներ չէ՞ն... Դուք
չէ՞ք, անոնք չէ՞ն, որ կոչում ունիք, պատ-
ուէր ունիք, պարտք ունիք կրօնքը պաշտ-
պանելու, գիւաշունչ խորշակի պիղծ հպու-
մով լուսաւիառ ծաղկի մը պէս խամրող պա-
տանները փրկելու: Այսպիսի ճգնաժամային
պահու մը մէջ լուծութիւնը կամ լոկ ազգասի-
րական նազանք, նա՛ մահաւանդ կերպով
մը գործակցութիւնը, ոճիւր պիտի չնկատուի՞
միթէ Յիսուսի մօտ...»:

Եւ լռեց:

Ո՞վ պատուական ընթերցող, վստահ ե-
ղիւր, այդ խօսակցութիւնը էականօրէն ի-
րԱԿԱՆ է. և մենք, — մէկու մը վիշտ
պատճառով չուզելով, — զայն չպիտի յարո-

նէինք արդ եւ այժմ, եթէ հետզհետէ ուրիշ
հաւատացեալներ -բարեբախտաբար գեռ սա-
կաւթիւ, — ամենքն ալ գայթակղած, գի-
մած չըլլային մեզ միեւնոյն գառն գանգատ-
ներով: Ուստի հիմա, մեր ճշգրիտ պարտքը
կատարելու համար աջաւիս կը գրենք, որ-
պէս զի չի համարուինք իբր լուրքեամբ հա-
ւանդներ:

Տե՛ր քաջ իմաստութիւն, և՛ Ո՛ր ունիցի ա-
կանջս լսելոյ, լուիցե:

ՏԱՆԸ

(Տեվամի)

Ընէ՛ք պէտքիւք մէրազալ պու սաթըրլարը
տաէթա եուտըյօրտը: Քէնտիսի իչուն պուն-
լար եէնի պէյանաթ նէվինտէն իտիյէր,
չիւնքի օ վագթա գատար քէնտիսի, սատէ-
տիլանէ էյի աուամլար զանն իթտիյի քահա-
նալարըն տէտիքլէրինէ ինանմըլտը...
Նիհայէթ արթըզ կէօզլէրի աչըլըյօրտը:

— Եա պապամ պունլարը նիչին պէն-
տէն կէզլէյօրտը, աճէպա, պէն հագիպաթը
թանըմալը տէյօլմիյիմ...:

Պու սուրէթլէ, գալտըրըմըն պիր քիւչէ-
սինտէ տուրմըչ, սօղուգտան մօս մօր քէ-
սիլմիշ օլան էլլէրիյլէ գութուլը թութմուշ
գալմիշտը: Չանն իտէրսին քի օ քիւչիւք
սիյահ եազըլար հէր պիրի պիրէր քիւչիւք
իյնէ կիպի եէրլէրինտէն սըչրայօր վէ օնուն
գանաաթլարընտս քիւչիւք քիւչիւք տէլիք-
լէր աշարապ օնը պօշաթըյօրտը:

— Ահ, քիւչիւքի պիլմիշ օլտայտըմ...:

Պաշ մէզալէյի իքի տէֆա օգուտըգտան
սօնրա, գութունըն օ պիր թարաֆընը չէ-
վիրտիյինտէ «կէօնակէօն վուպուաթլար»
իւնվանը կէօզլէնէ չարքար վէ օգո՛ր,

Բրեքքիների скандале)

Մէզքիւր չէքքլիք, պիր աուուպ ու ախլապ
մէսէլէսի իտի քի — թապիի մէզհէպ տիւշ-
մէնլէրի թարաֆընտան իյճաու օլունըպ —
պիր քահանայ վէ պիր մայրապետէ համը օ-
լլնմըլտը: Մէսէլէնին թէֆէրըուաթը օ տէ-

բէճէ վազիւ սուրէթտէ հիքեայէ օլունուեօր-
աը քի հիչ պիր չիւպհէյէ մէյտան գալմատը-
ղը կիպի, հէնուզ գալպի թէմիզ օլան քիւ-
չիւք Րընէ պիլէ պու խուսուստա գաթիյէն
թէրէտաիւտտէ գալմայօրտը :

Պու վարիպ գրաթատան սօնրա, չօճուզ
քէնալինտէ, տահա օ վազթա գատար հիչ
հիսա իթմէմիչ օլտուղը պիր թազըմ աճայիպ
հիսալյաթլար տուլուեօրտը : Քէնտինէ սատէ
կէօրինէկէլմիչ օլան հայաթըն իչտէն իչէ
պիր չօզ չայանը հիճուպ անվալի տէ պուլըն-
աըղը ֆիքրինէ գահիպ օլույօր, վէ, քէն-
տինին սատէտիլ վազթընտա բէրէսթիչ իթ-
տիյի վէ իտէճէյի քահանայ վէ մայրապետէ-
րին տէ պու գապիլտէն օլտուզլարընա հիւքմ
խոթիօրտը . . . :

Պու կապէթա, չօճուղըն բէրէսթիչ իթ-
տիյի պիլթէ (բաթ) տէհչէթլի պիր թէքմէ
ուրույօր վէ օ պիլթ թէմէլինտէն սարսըլա-
րագ երգըլլօրտը :

Չօճուզ եօլընա տէվամա պաշլար . . . մա-
հալը մագսուտընա վաարը օլուպ, բաքէթի
պիր պէսլէմէյէ թէսլիմ իտէրէք թէքրար է-
վինէ ալտէթ էլլէր : (Պէլքի տէ պու սըրա-
տա պէսլէմէտէ Ֆալօյը օգուր) :

*
* *

Իքի էլլէրի ճէպլինտէ օլարագ տալկըն
պիր հալտէ երբիւմէքտէ իտի :

Գուվվէյի մուխայեիլէսի աշմագլա թաշ-
մագտա, վէ գալպի տէ շիտտէթլիճէ չարք-
մագտա իտի . . . :

— Ահ, օ վալիտէմէ նէ տէյէյիմ քի, պա-
նա պու կազէթայը օգումայա միւսաատէ
իթմէգտիլ սէպիպինի շիմտի անլայօրում . . .
Օ, պէնիմ տէ հէր քէս կիպի օլմագըղըմը
իսթէյօրտը . . . Քրիստոնէական վարդապե-
տութիւնա կիթմէքլիյիմի . . . իւք հալորդու-
թիւն ալմազըղըմը արզու իտիյօրտը . . .
չիւնքի չայէտ պէն տէ պաշգալարը կիպի
եարմայաճագ օլտամ, գիյատէ ութանաճագ-
տը . . . Լաթին պու տէպիսլէրէ նէ հաճէթ
վար տըր . . . Խալըր, բէտէր վէ վալիտէմ
պու իուսուստա նամուսը քիմէլէր կիպի
տալմանմասըլար . . . Օնլարըն վազիֆէսի

պէնի տէ ալեհա իթմէքտի . . . Կիւնիւն պի-
րինտէ մութլագա պէնիմ պու շէլլէրի անլա-
յաճաղըմը պիլմէլի իտիլէր . . . :

Րընէ պու միւլահագալարլա պիր մէյտան-
ըղա վասըլ օլույօրտը : Ուզագտան պիր քա-
հանանըն կէլտիյինի կէօրիւր . . . տիգաթլըճա
պագարագ, քէնտինէ քրիստոնէական վար-
դապետութիւն էօյրէտէնլէրտէն պէրի օլտը-
ղընը թանրը :

Քահանայ եազլաչըր . . . վէ բէք եազը-
նընտան կէչէրսէ տէ, չօճուզ օնը պաշտան ա-
յաղա էյիճէ պիր սիւզէր, Փագաթ հիչ պիր
հիւրմէթ իշարէթի կէօսթէրմէղ . . . Քահա-
նայ չօճուղըն միւթատը օլան սէլամա ինթի-
զար իտիյօրտը . . . Լաթին Րընէ էլլէրինի ճէպ-
լէրինտէն չըգարմայա պիլի թէնէզզիւ իթ-
մէզ վէ ըսլըք չալարագ սալուչըր կիտէր . . .

Քահանայ պու հալտէն մէյուս օլուր . . .
միւթէէսիւր գալըր . . . Րընէ իսէ պունա
տահա գիյատէ մէմնուն օլուր :

— Շիմտի անլատըն մը քի պիր չարէք
սաաթտան պէրի պէն տէ ատամ սըրասընա
կէչմիլիմ !
տէտիյի սըրատա, քահանայ տախի քէնտի
քէնտինէ :

— Եւ, պոճտա մը . . . ! Զէվալըր չօ-
ճուզ . . . իսթիղրապըլլա թէպաիւտ իտէր կէ-
չէր :

*
* *

Րընէ էվէ կէլտիյինտէ վալիտէսի օնա,

— Րընէ, նէտէն պու գատար կէճիքտին
տէյինճէ :

Բիւր հիտտէթ պիր նազարլա վալիտէսինէ
պագարագ,

— Պու կիւն բէնչչէնպիւ տիր . . . մաղա-
ղալարը սէյր իթտիմ . . . — ճէվալընը վէրի :

Տաիմա միւսամէհաքեար օլան վալիտէսի
օնը տէր աղուշ իտէր, վէ

— Զահմէթինտէն տօլայը թէչէքքիւր ի-
տէրիմ, տէր :

Զէվալըր գարըճըղազ հիչ Ֆարզընտա օլ-
մայօրտը քի, էվվէթ, չօճուղընըն ալնիւ կա-
նազլարընը պուս իտիյօրտը, Փագաթ օնըն
րուհը նէ գատար թէպաիլ օլմուչտը :

Մատամ Թիշ իշինի պիթիրտիքտէն սօն-
րա, սգչամ թաամընը հազըլամազ իւզրէ
եէրինտէն գալգտըղը զէման տօլապը գաթար
վէ անպիթարընը տա ճէպինէ գօեա-
րապ :

— Հիշ տէյիւտէ պու տիգգաթըմ սայէ-
սինտէ Րընէ Ֆալօյը օգույամազ վէ չօճու-
ղըն գալպի տէ բաք գալլըր . . . տէր :

ՀԻՆ ԱՐԺԷՔԱԻՈՐ ՎԱԻԵՐԱԹՈՒՂԹԵՐ

ՆԱՄԱԿ ԿՈՍՏԱՆԴՆՈՒ ԱՌԱՋՆՈՅ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՌ Ս. ՔԱՀԱՆԱՅԱԳԵՏՆ ԻՆՆՈՎԿԵՆՏԻՈՍ Դ.

(Շար. եւ վերջ)

Եւ յորժամ ի խաչին էր եւ ի գերեզմա-
նին մարմնովն, աստուածութեամբն էր ընդ
աջմէ Հօր, և փառօք նորա լի են երկինք և
երկիր: Էր և Հայր ընդ նմա յերկրի որպէս և
ասաց. Հայր իմ ընդ իս է, և ոչ եթող զիս
միայն: Զի ուր Հայր է՝ անդ է և Որդի և
Հոգի: Եւ ուր Որդի՝ անդ է և Հոգին և Հայր:
Եւ ուր Հոգին սուրբ՝ անդ է Հայր և Որդի:
Արդ իջեալ ի գերեզման մեռեալ մարմնով
և կենդանի աստուածութեամբն արար ա-
ւարումն դժոխոց, և յարուցեալ յերրորդ ա-
ւուր, յարոյց ընդ ինքեան ի մեռելութենէ
մեղաց զհոգիս մարդկան հաւատացելոց, և
ետ յոյս՝ եւ մարմնոյ յարութեան ըստ նմա-
նութեան իւրում ի յերկրորդ գալստեանն:
Եւ յետ քառասնօրեայ աւուրց վերացաւ յեր-
կինս նովին մարմնով յանդիման առաքելոցն,
և նստաւ ընդ աջմէ մեծութեան Հօր ի բար-
ձունս ըստ առաքելոյ: Գալոց է մերով մարմ-
նովս որով համբարձաւ դատել զկենդանիս և
զմեռեալս որպարութեամբ. եւ հատուցանել
իւրաքանչիւր զգործս: Արդ որ յաղապօ սըր-
բոյ Նորրորդութեան և անօրէնութեան Քրիս-
տոսի, այս է մեր ճշմարիտ խոստովանու-
թիւն հաւատոյ զոր համառօտ բանիւ եղաք
առաջի: Իսկ վասն խնդրոց մի եւ երկու
բնութեանց, նախ՝ անպատշաճ վարկանիմք

մանրամասնաբար քննել զսրդին Աստուծոյ,
և և համարել զնա ընդ սահմանաւ գիտութեան
մերոյ անպեալ, որ է անտեղի եւ փառ մեծ
իջուցանել զնա յիւրական բարձրութիւնն որ
է անհասութիւն և անճառութիւն, սակայն
համառօտ բանիւ ասացուք: Ասեմք մի բնու-
թիւն ի Քրիստոս, ո՛չ չփոթմամբ ըստ եւ-
տիքեայ, այլ ըստ Կիւրղի Աղեքսանդրացոյ՝
որ ի գիրս պարապմանցն ասէ ընդդէմ Նեո-
տորի. թէ մի է լնութիւն բանին մարմնա-
ցելոյ որպէս և հարքն ասացին: Եւ հարս
կոչէ զԱթանասիոս եւ որ յառաջ քան զնա:
Եւ մեք յաւանդութենէ սրբոցն ասեմք զայս,
և ոչ ըստ չարափառացն կարծեաց. չփո-
թումն կամ յեղումն կամ այլայլութիւն ար-
կանելով ի միաւորութեանն Քրիստոսի, մի
ասելով բնութիւն, այլ փոխանակ մի անձ-
նաւորութեան զոր դուք ասէք ի Քրիստոս
որ է ուղիղ և խոստովանեալ ի մէնջ, է եւ
մերս մի բնութիւն ասելն զոյգ եւ նման և
ոչ հերձուածողական կարծեաց աղազաւ:

Եւ յայտ յայնմանէ է, զի յորժամ բանիւ
խօսիմք վասն նորին, ոչ ի մին միայն դա-
դարեմք, այլ եւ զերկուցն յայտնութիւն ցու-
ցանեմք որպէս եւ չարչարանացն և մահուն
վերառացեալքն ի սրբոյն Աթանասէ յայտ-
նեն. այն զի ասէ թէ Աստուած գոյով Բանն
անչարչարելի էր բնութեամբ, սակայն ընդ
չարչարելի մօրմնոյն, անբաժանելի միացեալ
անմարմնին, եւ որ այսպիսիք են ռազումք:
Քանզի մի բնութիւն ոչ վասն այլ իրիք ասի
ի մէնջ, այլ յաղագս անբաժանելի և ան-
ճառ միաւորութեան բանին և մարմնոյն:
Նաեւ յերկու բնութիւն ասելոյն յորժամ ոչ
վասն բաժանման լինին ասացեալ քան ըստ
Նեստորի, այլ վասն զանչփոթութիւն ցու-
ցանելոյ ընդդէմ չարափառացն եւտիքի և Ա-
պողինարի ոչ փախչիմք: Այլ զոր օրինակ
հոգի և մարմին մարդոյ են այլ եւ այլ բնու-
թիւնք. վասն զի ոմն երկնային է և ոմն
երկրային, ոմն երեւելի և ոմն աներեւոյթ,
ոմն ժամանակեայ և ոմն անմահ: Սակայն
յետ միաւորութեան, մի բնութիւն ասի
մարդն, և ոչ երկու եւ ոչ մի բնութիւն ա-
ստելովն՝ չփոթումն իմանի ի մարդն, կամ

հոգի միայն կարծել գնա, կամ մարմին միայն : Այսպէս եւ Քրիստոս թէպէտ եւ մի ասի բնութիւն, ոչ չփոթման աղապաւ եւ ասացեալքն, այլ վասն անճառ միաւորութեան երկուց բնութեանցն ընդ միմեանս, զի թէ այսպէս ոչ էր, հարկ էր ապա ոչ երկու բնութիւն միայն, այլ եւ երկու բնութիւնս իմանալ Քրիստոսի, երկուս՝ զմարդկայինս հոգի եւ մարմին եւ մի զաստուածայինն : Բայց յետ միաւորութեան բարձան երկութիւն քրիստոսն : Արդ եթէ միութիւն վասն անքակտելի եւ անբաժանելի միաւորութեան ասի, եւ ոչ վասն չփոթման : Ապա եւ երկու բնութիւն վասն անչփոթ եւ անալլայելին լինելոյ եւ ոչ վասն բաժանման, երկաքանչիւրքն ի սահմանի եւ ուղղափառութեան :

Այս գիր ձեռն խնայ է կոստանդնուպոսի Աստուծոյ եւ շնորհօք նորին Կաթողիկոսի Հայոց :

ԱՄԱՍԻԱՅԷՆ ՆԱՄԱԿ

Ամասիա 16 Նոյեմբ. 1913

Գերապայծառ խմբագրապետ Տեո

Շաբաթաթերթդ իր 115 թուոյն մէջ Աշտիկեան Մկրտիչ Գերապայծառին մահը ծանուցանելով արժանապէս դուռնաւ ինչ որ Հայն-գոցեալին եւ անորն եւ ունեցած հաստատ հաւատքը : Ներողամիտ եղէք, գուցէ ձեր ծանօթութենէն վրիպած էր, որ աւելցնեմ թէ նա եղաւ տեղւոյս Հայ-Կաթողիկէ հասարակութեան հիմնադրուին :

1881ին, մինչ Վեր. Յիսուսեան Հարք քաղաքս եկան, հոս ոչ հասարակութիւն եւ ոչ քահանայ կը գտնուէր, որով մեծ դժուարութեան կը բաղխէին դարձերը : Արդ երջանկաշիջատակ Ագարեան Կ. Պատրիարքէն տեղս ղրկուելով Աշտիկեան Գերապայծառ, բարեբրտութեամբ ու խոհեմութեամբ այնպէս մը յաջողեցաւ որ 50 ընտանիք ստորագրեալ աղերսագիր մը մատուցին, խնդրելով որ ընդունուին ի կաթողիկէութիւն եւ ճանչցուի աստ Հայ-Կաթողիկէ հասարակութիւնը, որ եւ գլուխ եղաւ յաջողութեամբ՝ նոյն Հայն-

գոցեալին հովիւ ու գործօն ընթացքովը . եւ քանի մը ամսուան մէջ տեղւոյս Հայ-Կաթողիկէ հասարակութիւնը պաշտօնապէս ճանչցուած էր : Թէպէտ եւ 10 տարի առաջ թուահամարէ մը ստուգուած է որ սոյն ստորագրեալներէն չատեր, գուցէ անձնական շահերու վրիպելով, չէին յարատեւած, այս սուհանդերձ Աշտիկեան Գերապայծառ արդիւնքը կ'ունենար Հ. Կ. հասարակութիւնը ճանչցուցած ըլլալու . եւ Վեր. Յիսուսեան հարց եւս անձուէր աշխատութեամբ, անոնց տեղը եկողներ պակաս չեղան ու չեն եւ այժմ 200ի մօտ անձնաւորութիւն կը հաշուէ հասարակութիւնս, մեծաւ մասամբ եռանդուն ու գործադրող կրօնի՝ առանց հաշուելու, ի կիրակնօրեայ պատարագի արանց ու կանանց բազմաթիւ հաղորդութիւնը, ամեն տարուան երկու սեռի ալ կրթութիւնները, երիտասարդներ, ամեն դասակարգէ՝ որ կը փակուին ամեն տարի քանի մ'օր հոգեւոր պարապման : Եղբայրութիւններ արանց եւ կանանց, օրիորդաց . երիտասարդաց եւ պատանեկաց դաս մը աղքատաց օգնող, բարի երեկոյթներով զբաղցնող ընթերցատուն մը (cercle), Նաեւ նորերս կազմուած երիտասարդաց դպրաց դաս մը : Մեր Արհի. վիճակաւորն եւս Արհ. Նազլեան Գերապայծառ բազմիցս պաշտօնական ունեցաւ մխիթարուելու հասարակութեանս գոհացուցիչ վիճակէն ու յայտնելու իր խանդալատանքն ու սէրը Ամասիոյ հօտին որ կը յուսայ բեղմնաւորիլ իր Ս. Օրհնութեամբ ու քաջալերութեամբ : Արդ հասարակութիւնս իր բարգաւաճման այս ընթացքին մէջ բնաւ կանօրէն չպիտի կրնար մոռնալ ինչ հիմնադրու բարեբարը եւ ի ցոյց երախտեաց այս կիրակի անոր հոգւոյն յաւիտեանական հանգրստեան համար կատարուեցաւ հանդիսաւոր սուրբ պատարագը եւ հոգեհանդիստ մեր եկեղեցւոյն մէջ, ներկայութեամբ բազմաթիւ հաւատացեալոց, որոնք եկած էին իրենց վերջին յարգանքն ընծայելու առ հանգուցեալն . եւ Ամասիոյ Հ. Կ. հասարակութիւնը որ իր գոյութիւնը կը պարտի Աշտիկեան Գերապայծառին՝ պիտի պահէ յաւիտ անոր՝ երախտագիտութեան անշնչելի յիշատակ մը :

ԱՄԱՍԻԱՅԷՆ ՆԱԹՈՂԻԿԷ ՄԸ

ԼԻՈՒՆԻ ԿԱԹՈՂԻԿԷ ԻՐԱՒԱԳԷՏՆԵՐՈՒ ՀԱՄԱԺՈՂՈՎԱԸ

(Շար. եւ վերջ)

Համաժողովին երկրորդ օրուան բազմաթիւ բանախօսութիւններուն մէջ նշանաւոր է Լավալէ Գերապայծառին, որ ցոյց տուաւ թէ ինչպէս 1907ի եւ 1908ի օրէնսդիրը ստիպուած եւ բռնադատուած էր Կաթողիկէ վարդապետութիւնն ու նուիրապետութիւնը ճանչնալու :

Լավալէ Գերապայծառը խորին խորհուրդներով եւ յուզիչ բացատրութիւններով երեւան կը հանէ սնամէջ հանգամանք, փճութիւնը բաժանման օրէնքին եւ կառավարութեան կրօնական քաղաքականութեան : Ն. Արհիապատուութիւնը աւելի տոռաջ երթալով կը քննէ այս ամէն տեսակ կոպտութենէ, զգուհիութենէ եւ չկեցող փճութեան պատճառը : Պատճառը այս է որ, կ'ըսէ, մեր զիմացիներ կառավարութիւն մը չէ, այլ փիլիսոփայութիւն մը, որ օրինական միջոցներով կ'ուզէ ջնջել Կաթողիկէ ճշմարտութիւնը : Ուստի Կաթողիկէ իրաւագէտներու պարտքն է գործնական ապացոյցներով փշրել, ջախջախել այս կառավարական հրէշային փիլիսոփայութիւնը, եւ Ֆրանսայի կառավարութիւնը ստիպել ճանչնալու բացայայտ ճշմարտութիւնը :

Վսեմ. Գապրիէն կարդինալը, Արհի. Ուրվէն Գերապայծառը եւ Մ. Լամարզէլ յաջորդաբար իրենց շնորհակալութիւնները յայտնեցին Լավալէ Գերապայծառին :

Երրորդ օրը Պէլէյի Եպիսկոպոս Մանիէ Գերապայծառը, պատարապի ատեն յանպատարաստից հոգեցունց քարոզ մը խօսեցաւ : Ամփոփեց Համաժողովին ըրած գործերը, յատկապէս ջանաց չեղտելու կարեւորութիւնը Սրբէն Գերապայծառի վարդապետական ճառին, որ անշուշտ արձագանգ պիտի գտնէ Կաթողիկէ Ֆրանսայի ամէն կողմերը : Շնորհաւորեց Կաթողիկէ իրաւագէտները որ կ'աշխատին Աստուծոյ Եկեղեցւոյն նուիրական ազատութիւնը հաստատելու, կ'աշ-

խատին, միակ միջոցով, որ է կռուիլ իմացական անիրիւստութեան դէմ, եւ ծառաւել անարատ եւ փրկարար ճշմարտութեան սկզբունքները : Շատ Կաթողիկէներ զօրաւորաբար այլազգ գործեցին, զիջումներ ըրին, Յեղափոխութեան հետ խաղաղութեան դաշինք կոչեցին : Ինչ օգուտ ունի խաղաղութիւնը՝ առանց արդարութեան : Անճնասիրութիւնն ու հեղգութիւնն են հիմայդ Կաթողիկէներուն համակերպող ու ճնշող ընթացքին : Կաթողիկէ իրաւագէտները օրինակ կուտան կանգնելու հարստահար Պետութեան դէմ, եւ եթէ հարկ ըլլայ արիւն իսկ թափելու :

Այսպէս գործելով պիտի ծառայեն Ֆրանսայի եւ զայն պիտի փրկեն. որովհետեւ Ֆրանսա իր էութեամբն ու աւանդութեամբը Եկեղեցւոյ հետ կապուած է : Մասնական ազանդը, ընդհակառակն, թէ՛ եկեղեցւոյ թըշնամբ է եւ թէ՛ ներքին ոսոխ մըն է : Ուժգնօրէն կը հարուածէ ան թէ՛ ֆրանսան թէ՛ Եկեղեցին : Արդ եկեղեցին Ֆրանսական հայրենիքի պարիսպն է, եւ մեր ֆրանսական ամբողջ ազատութիւնները համերաշխ են եկեղեցւոյ ազատութիւններուն հետ :

Առաւօտեան նիստին մէջ Մ. Բիտու Ասպետը խօսեցաւ եկեղեցիներու եւ պաշտամունքի առարկաներու կառավարութեան դասակարգման վճանգին վրայ, եւ հաւաստեց թէ այդ դասակարգումը Եկեղեցւոյ սեփականութեան իրաւանց դէմ դաւադրութիւն մըն է. ատով ժողովրդապետները եւ եպիսկոպոսները իրենց տան մէջ տէր ըլլալէ կը դադրին, եւ վերջապէս այդ մասին եղած դրամական առաւելութիւնը կարծուածէն շատ քիչ է եւ երբեմն նոյն իսկ ծաւրական : Ասպետը այս ըսածները գործնական օրինակներով կը հաստատէ : Այս խնդրին վրայ շատ շահեկան վիճաբանութիւններ եղան :

Ապա Մ. Հանրի Մուանդգուր կարգաց կարծ տեղեկագիր մը յուղարկաւորութեան վերաբերեալ օրէնքներու եւ քաղաքապետներու նոյն մասին ունեցած իրաւանց սահմաններուն վրայ եւ ըսաւ. «Պէտք է ապահովել քրիստոնէական յուղարկաւորութեան

անթերի ազատութիւնը, գիտնալով թէ հոս, ինչպէս այլուր, ազատութիւնները չեն տրուիր, այլ կ'առնուին:»

Մի քանի սքանչելի բանախօսութիւններէ եւ տեղեկագրերու ընթերցումէ յետոյ առաւօտեան նիստը փակուեցաւ:

Վերջին նիստը տեղի ունեցաւ կէսօրէն ետքը. կը նախագահէր Վսեմ. Գապրիէն կարգինալը, ներկայ էին Արհի. Արհի. Սըվէն և Մանիէ Գերապայծառները:

Վսեմ. կարգինալ կը կարգայ Պրոս Ժ. Ի հեռագիրը, որ յոտնկայս կ'ունկնդրուի: Ոսք կ'առնու Մ. Լուի Տրոֆէ և եկեղեցւոյ ներկայ եւ ապագայ վիճակին վրայ կը ճանդէ:

Կսոս կանոնիկոսը փիլիսոփայական եւ աստուածաբանական հզօր փաստերով կը հաստատէ թէ Ֆրանսան պէտք ունի կաթողիկէ Պետութեան մը: Բաւական չէ անհատները քրիստոնեայ ընել, այլ հարկ է քրիստոնեայ ընել նաև Պետութիւնը:

Այս միջոցին Վսեմ. Գապրիէն կարգինալը իր թեմը մեկնելու ստիպուած ըլլալով կ'ընդմիջէ Կսոս կանոնիկոսին խօսքը, իր վերջին օրհնութիւնը կ'ուղղէ կաթողիկէ իրաւագէտներուն և կ'ըսէ. Շարունակեցէ՛ք ձեր գործը: Աշխատեցէ՛ք և ազօթեցէ՛ք: Մեր պարսքն է չարը բնաջինջ ընել. բայց այժմ չարին լուծը մեր վրայ կը ծանրանայ: Բայց վստահ ենք որ Նախախնամութիւնը մեզի գեղեցիկ ապագայ մը կը պատրաստէ:

Կսոս Կանոնիկոսը խօսքը կը շարունակէ եւ կը վերջացնէ բոլոր ծափերու մէջ:

Մ. Մանեէն ներկայացուց ուրիշ երկիրներու կաթողիկէից վիճակը. յիշեց նաեւ Հայ կաթողիկէները, որոնց պատրիարքը Ամեն. Թէրզեան, այնքան կը հալածուի Եկեղեցւոյ նուիրական սկզբունքները ընդոտնող անձերէ:

Մ. Ժօզէֆ Լիւսիէն-Պոէն յայտարարեց ապա թէ չատ մը տեղեկագրեր, զորս կարգալու. Ժամանակ չէ եղած, ամբողջովին պիտի հրատարակուին հաստատութեանց եւ իրաւագիտութեան Կաթողիկէ Հանդեսին մէջ:

Վերջապէս Սըվէն Գերապայծառը կ'արտասանէ փակման ճառը:

Կը շնորհաւորէ կաթողիկէ իրաւագէտները, որ կաթողիկէ իրաւունքին սկզբունքները բացատրեցին՝ առանց ազդուելու այն ազատականութեանն որ միշտ խոյս տուեր է Բահանայապետներու այնքան բացայայտ հրահանգներէն:

Մեր պարտութեանց պատճառը, կ'ըսէ, կաթողիկէական ազատականութիւնն է: Խոյս տանք ուրեմն փախչինք անկէ ամէն կերպով:

Բա՛րձր բռնինք մեր վարդապետութեանց, զերիշխանութիւնը. և վստահ ըլլանք թէ յաղթութիւնը մերն է (երկար ծափահարութիւններ):

Սըվէն Գերապայծառը իր հայրապետական օրհնութիւնը կու տայ և համաժողովը կը փակէ:

ԻՂՁ ԱՌ ՄԱՐԻԱՄ

Մինչ օրանէս ո՛վ մայր երկնի,
Բացիր աչքս գոյոյ Մայրենի,
Ո՞հ այն օրէն հեռու բեզմէ
Սիրոյդ բսուեր սիր իմ պաշտէ:

Այլ երբ յօրհաս գամ ախարիս
Ձիս երեսէդ մի՛ վարեր.
Երբ իմ աչքեր գոցուին յասիս
Քեզ թող տեսնէ իմ հագույս սէ:

Երբ ալ իմ շուրթ չըսէ Մարիամ,
Սրբիս հեծմունք թող բեզ խօսի.
Երբ ալ իմ շունչ իսպառ մարի,
Սիրոյդ ի ծով անէանամ,
Սիրոյդ ի ծով, ո՛վ կոյս Մարիամ:

Յ. Վ. ՊԱՅԹՈՒՆԻ

ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵՐ

ՏՕՆԱՅՈՅՑ

Դեկտեմբեր 14 ժ 4/ր. ըմ. Ե. Յիսնակաց:

15 ԴՂ. ըմ. Աղդէի հայրապետին եւ Ար-
գառու քաղաքին:

16 ԴՂ. զմ. Արաքանայ եւ Խորենայ
եւ անարձաք բժշկացն կող-
մայի եւ Դամբանոսի, եւ
Աստուածաբան վկային: Եւ
Ինդոսի, Դամբայի եւ Գլե-
րիկոսի քահանային եւ եր-
կուց քիւրուցն: Բարեկնպն.
Ծննդեան Քրիստոսի:

17 ԴՂ. զվ. Պահոց:

18 ԵՂ. զմ. Ա. օր պահոց Ծննդեան

19 Ուրբ. զվ. Բ. » » »

20 Շաբ. ամ. Գ. » » » Եւ
Լեւոնի Հայրապետին եւ
Հայրապետացն Բաղկեղունի
Ս. Ժողովոյն:

Ս. ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵՐԵՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ

(Շար.)

Ս. Եպիփան Թեոփիլոսի մտքին անտեղեակ ըլլա-
լով, անոր օրինակին հետեւեցաւ, ինքն ալ ժողովքով
Որդինէսի գիրքերը արգելեց, եւ Ոսկերեանին գրեց
որ նոյնպէս ընէ, ինչպէս արդէն Թեոփիլոս անո՛ր գրած
էր: Եւ որովհետեւ Ոսկերեան իր եկեղեցւոյն գործե-
րով եւ քարոզութեամբ զբաղած՝ որդինէսին խնդրին
մասին անհոգ կ'երեւար, Եպիփան ելաւ անձամբ Պոլիս
եկաւ:

Նոյն օրերը Ոսկերեանին աշխարհական եւ եկեղե-
ցական թշնամիները շատերուն, ինչպէս նաեւ Թեոփի-
լոսի, գրած էին որ Կ. Պոլիս գան եւ ժողովով Ոսկե-
րեանը պաշտօնական ընեն: Թեոփիլոս այս մասին հարկ
եղած հրամանները իր եպիսկոպոսներուն տալէ վերջ
երբ կ'ուզէր ինքն ալ ճամբայ իյնալ, Արկադէոս կայ-
արէն Պոլիս կանչուեցաւ, իրեն դէմ եղած ամբաստա-
նութեանց պատասխան տալու համար:

Թեոփիլոս մտաւորաբար ճամբայ ելաւ: Իր
եպիսկոպոսներէն ոմանք կանխաւ յիշատակ ըլլալով Ե-
պիփանէն, յառաջ Կ. Պոլիս հասան եւ երբ ան եկաւ,
անոր միտքը պատրաստին Ոսկերեանի մասին: Ասոր
համար երբ Ոսկերեան Եպիփանը սիրով զիմաստրեց եւ
հայրապետանոցը իջեւանելու հրաւիրեց, անիկայ չըն-
դունեցաւ այս հրաւերը:

Թեոփիլոսն Եպիփանի թելադրեցին ստիպել Ոս-
կերեանը որ անպայման դատաւարտէ Որդինէսի
ամբողջ գիրքերը: Ոսկերեան այս մասին յայտարարեց
թէ այդ գործը երկար ժամանակի եւ քննութեան

պէտք ունի: Եւ որովհետեւ Սկիտացիք դարձեալ Կ.
Պոլիս եկած էին Թեոփիլոսը ամբաստանելու եւ իրենք
զիրենք արգարացնելու համար, Ոսկերեան զանոնք
Եպիփանին զրկեց, որպէս զի տեսնէ թէ ան ի՞նչ պիտի
ընէ: Եպիփան Սկիտացիներուն հետ տեսակցելէն վեր-
ջը նկատելով թէ Կ. Պոլիս մէջ տեղի ունեցող շար-
ժումները աղէկ էլք պիտի չունենան, կ'ուզէր անկէ
փութով մեկնել եւ իր աթոռը դառնալ:

Նոյն միջոցին Թեոփիլոս Բաղկեղուն հասաւ եւ
շատ եպիսկոպոսներ իր կողմը վստակեցաւ, որոնց մէջ
էր նաեւ Կիւրինոս Բաղկեղունի եպիսկոպոսը: Վերջինս
երբ սկսաւ Ոսկերեանին դէմ շարախօսել, Աստուած
խրատուեցաւ: Որովհետեւ, ինչպէս Սաղմոսնա եւ Սոկ-
րատ կը պատմեն, նոյն օրերը Քաղկեդոն գանձող
Նիքիթրաի սուրբ Մարութա եպիսկոպոսը, երբ այն
տեղէն Պոլիս կ'անցնէր, բաղմութեան մէջ Կիւրինոսի
հանդիպեցաւ եւ անոր ոտքին վրայ կոխեց: Կիւրինոս
ոտքին ցաւէն այլ եւս չկրցաւ Պոլիս անցնել Թեոփի-
լոսի հետ, եւ մինչեւ իր մահը այս ոտքին ցաւը կրեց:

Թեոփիլոս Ոսկերեանը ժողովի կանչեց իրբեւ
դատելի: Ոսկերեան պատասխանեց թէ՛ նախ Թեո-
փիլոս թող գայ իր մասին եղած ամբաստանութեանց
պատասխան տալ եւ ապա զիս դատի կանչէ. կամ նախ
ինքը այդ ժողովէն թող ելլէ եւ իր տեղ ուրիշ մը ա-
նաչառ դատաւոր թող ըլլայ, այն ատեն ես պատ-
րաստ եմ՝ ներկայանալու: Երբ հետեւ Թեոփիլոս ինծի
թշնամի է եւ ինք իր բերնով թէ՛ Աղիքոսանդրիոս եւ
թէ Լիկիոս ըսած է թէ ժողովի կ'երթամ Յովհան-
նէսը աթոռէն ձգելու համար:

Թեոփիլոս անտեղեկ թէ Քաղկեդոն գործ չի տես-
նուիր, անցաւ Կ. Պոլիս, ուր գիտէր թէ թաղուհին
իր կողմն է: Երբ քաղաքը մտաւ եկեղեցականներէն
ոչ ոք զինքը դիմաւորեց, որովհետեւ ամէնքը գի-
տէին թէ իրենց Հայրապետին թշնամի է նա: Սակայն
Պոլիս գտնուող ալեքսանդրացի նաւավարներն ու
նաւաղները զինքը ուրախութեամբ ընդունեցան: Ուս-
տի ինքն ալ առանց եկեղեցին այցելելու շիտակ գը-
նաց արքունի պալատը՝ ըստ կամաց Եւդոքսիոս թա-
ղուհւոյն որ անհամբեր կը սպասէր անոր գլուխանան
Թեոփիլոս Ոսկերեանի անտեսակալութեամբ հրաւիրեց
Թեոփիլոսը իր հիւրանոցը, բայց ան յանձն չտուաւ
երթալ:

Մինչեւ այն ատեն Արկադէոս Ոսկերեանին կողմն
էր. ուստի անոր հրաման տուաւ որ պալատ գայ եւ
Թեոփիլոսի եւ անոր ստիներուն դատը տեսնէ: Ոսկե-
րեան հրաժարեցաւ, ըսելով թէ՛ թո՛ղ երթայ դատ-
ատի իր եպիսկոպոսներէն իր երկրին մէջ եւ ոչ մեզմէ,
մեր վիճակին մէջ:

Իսկ Թեոփիլոս, ամբողջ երեք շաբաթ, իր եւ թա-
ղուհւոյն համարողներուն հետ ամէն տեսակ միջոց-
ներ կը հնարէր եկեղեցականները Ոսկերեանէն բաժ-
նելու եւ զանիկոյ պաշտօնական ընելու պատճառներ
գտնելու համար:

(Շարունակելի)

ՀԱՅԵՆՈՐ ՄՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ
„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ԳՐԲԷՆ

Իր. Բ. Ա. — Ի. Ժ. — Ուրիշներու պակասութեանց համար
քերելու վրայ:

(Շար.)

Եւ տեսա՛ ինչպէս աշխատեցաւ, որ տու-
վի՛նք իրարու քննել վերցնել. որովհետեւ ոչ ոք կայ ա-
ռանց պակասութեան, ո՛չ ոք առանց քննան. ո՛չ ոք
ինքնիրեն թաւախանայա՛սի իմաստն. այլ հարկ է որ
իրարու հանդիմանեմք, գիտար մխիթարեմք, նոյնպէս ի-
րարու օգնենք, զիրար հրահանգենք ու խրատենք:

Այլ քե՛ս ո՛րչափ առաջինի է մեկը, լաւ եւս կը
յայտնուի նեղութեան առիթներուն մէջ:

Քանզի առիթներն զմարդ չեն սխալացներ, այլ ա-
նոր ինչպէս ըլլալը երեւան կը հանեն:

ՄԵՆՈՒԹԻՒՆ Ս. ԱՌԵՏԱՐԱՆԻ

ՅԵՍՈՒՍԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Փրկչին Ս. Ծնունդը

(Դու. Բ. 4—7)

(Շար.)

12. Ուրիշ առարկութիւն մըն ալ, Դա-
տարը կամ Փոխ-Հիւպատի մեծ պաշտօնա-
տեարք Հերովդէսի մահէն և Արքեղայոսի
յաքսորս վտարուելէն վերջը միայն սկսան
իշխել Հրէաստանի մէջ, արդ Հերովդէս մե-
ռաւ Աւգոստոսի թագաւորութեան 45րդ
տարին, և Արքեղայոս աքսորուելէն առաջ
թագաւորեց գոնէ՛ ինը տարի: Ուստի ի՞նչ-
պէս կ'ըլլայ որ Աւգոստոսի 42 տարուան
մէջ, երբ ծնաւ Քրիստոս, Կիւրենոս Հրէաս-
տանի մէջ կատարած ըլլայ աշխարհագիրը,
որ Փոխ-Հիւպատոսի պաշտօն էր:

Ասոր պատասխանը գիւրին է: Կիւրենոս
Փոխ-Հիւպատի էր Ասորոյ. արդ Հրէաստան
մաս կը կազմէր Ասորոց հիւպատոսական
Գաւառին (Provincia Consularis). որ վասն
և թուահամարը կատարուեցաւ Կիւրենեայ
հսկողութեան տակ, և ոչ Հերովդէս: Եւ
ճիշդ ասոր համար է որ Աւետարանիչը չի
յիշեր Հերովդէսը, քանի որ Հռովմայեցւոց

աշխարհագրին վրայ է խօսքը, իրրեւ գեր-
իշխան տէրերու, և ոչ թէ Հերովդէսի թա-
գաւորութեան. իսկ Ս. Մատթէոս կը յիշէ
զՀերովդէս (Բ. 1), քանի որ ինքը կը խօ-
սէր Հրէից թագաւորին ծննդեան վրայ, որ
քնաւ առնչութիւն մը չունէր Հռոմայ հետ:

13. Արդ կրնայ հարցուիլ թէ Աւետարա-
նիչը ինչո՞ւ արգեօք արժանի գտաւ յիշել այդ
աշխարհագիրը:

ա. Որպէս զի իր ըրած պատմութեան
էական մասերն ալ գիւրահաւատալի ընէ՛-
նչանակելով անոր ամէն մանրամասնութիւն-
ները, տեղերու, ժամանակի և իրաց պայ-
մանները ցոյց տալով, և այսքան աշխարհա-
հոյակ գործողութեան մը վերալացու Հիւ-
պատոսն ալ անուանելով:

բ. Որպէս զի ցոյց տար որ Աւգոստոս
Կայսեր այս բարձրագոյն հրամանն Աստուծոյ՝
թագաւորաց թագաւորին, անքնին Տեսչու-
թեան տրամադրութեամբ եղած էր, ո՛չ ու-
րիշ մէկ նպատակաւ եթէ ոչ որպէս զի
Քրիստոս ծնանի Բեթղեհեմի մէջ: Այս պատ-
ճառաւ է որ ճիշդ այն ժամանակ հրամայուե-
ցաւ աշխարհագիրը և կատարուեցաւ Հրէ-
աստանի մէջ, և ոչ յառաջագոյն:

գ. Որպէս զի ապացուցուէր որ Քրիստոս
ծնաւ բովանդակ աշխարհի վրայ տիրող ընդ-
հանուր խաղաղութեան ատեն, նա որ կը
բերէր մարդոց երկնային խաղաղութիւնը,
անհամեմատաբար աւելի մեծ և անձկալի,
զոր աշխարհ չի կրնար տալ, եւ յիշաւ ճիշդ
այն պահուն դադրած էին ամէն պատերազմ-
ներ, և ամէն կողմ կը տիրէր ցանկալի հան-
դարտութիւն. չարունակեալ պատերազմնե-
րու պատճառաւ շուրջ երեք դարերէ ի վեր
բաց մնացող Յանոսի տաճարին դռները եր-
րորդ անգամ ըլլալով փակուած էին, ըստ
վկայութեան եկեղեցական և արտաքին պատ-
միչներու:

դ. Որպէս զի Քրիստոս Փրկիչը այն ա-
ռաջին աշխարհագրին մէջ խոնարհաբար ար-
ձանագրուէր մարդահամարի մէջ, որով կը
նշանակուէր մեր ազատագրութիւնը սատա-
նայի մարդահամարէն, արձանագրութենէն ու
բռնակալութենէն. զի Քրիստոս Քնդեաց

զծեալագիր մերոյ հակառակութեանն հրամանօքն իւրով... եբարձ զայն ի միջոյ... մերկեաց զիւսանութիւնս եւ զպետութիւնս, յայտանդիման խայտառակեաց նշանակեալ զնոսա յանձին իւրում» (Կող. Բ.):

14. «Ամեն մեկը իր քաղաքին մեջ»: Ըստ Հրէից՝ ո՛չ ծննդավայրը և ո՛չ բնակավայրը սեպհական քաղաք կը համարուէր, այլ իր ցեղին՝ մանաւանդ իր պատկանած ընտանիքին կամ Տան և Նախահարցը հաստատուած բնակավայրը. հո՛ն կը պահուէին արձանագրութիւնք, և հոն կը գիմէին մարդահամարի գործողութեանց ատեն: Թէպէտեւ հռովմէական օրինաց համաձայն պարզապէս բնակավայրը (domicilium) կամ ծննդավայրը բաւական էր արձանագրուելու համար, սակայն Հռովմայեցիք իրենց նուաճած ժողովրդոց սովորութեան կը յարմարէին՝ մանրամասնութեանց մէջ. և այս տեսակ խնդիրներու մէջ դեռ հրէական օրէնքները զօրութիւն ունէին ի Հրէաստան որ թէեւ հպատակ բայց առանձինն թագաւորութիւն էր Հերովդէսի իշխանութեան տակ:

Հրէից քով մարդահամարի այս ձեւին վկայութիւններ ունինք հին Կտակարանին մէջ. հմմ. Յեսու, է. 14. — Ա. Թագ. Ժ. 19, 20, 21, — Բ. Թագ. Ի. 7. 2. — Արդ, Յովսէփայ և Մարիամու քաղաքը՝ Բեթղեհէմն էր: Բեթղեհէմ Դաւթի հօրը Յէսսէի հայրենիքն էր. Դաւթ ալ հոն ծնած ու մեծցած էր, և իրմէն՝ որ այս Տունը նախ զառաջինն թագաւորութեամբ ազնուացուցած էր, Բեթղեհէմը կը յորջորջուի քաղաք Դաւթի. (հմմ. նաեւ համար 11), թէեւ հին Կտակարանին մէջ ուր որ քաղաք Դաւթի կ'ըսուի, կ'իմացուի Սիոնի աշտարակը զոր Դաւթ կառուցած էր:

15. «Յովսէփ ալ ելաւ... Մարիամին հետ»: Եբրայական ոճով ելանել՝ ճշգրէն խօսելով, կը նշանակէր ճամբորդութիւն մ'ընել զէպ ի Երուսաղէմ. որովհետեւ որ կողմանէ որ վար մէկը, եւք մը պիտի կատարէր հոն հասնելէն առաջ. հմմ. Մատթ. Ի. 17. Իսկ յընդհանրի կը նշանակէ առ հասարակ ճամբորդել, երբայ, թէեւ այն տեղը՝ ուր կ'երթցուի, աւել

լի ցած կամ դաշտավայր ալ ըլլայ: Սակայն Բեթղեհէմի դիրքը՝ եթէ Նազարէթի հետ բաղդատուի, աւելի բարձր էր, որովհետեւ ջուրերը Հրէաստանէն ի Գալիլեա կը հոսէին: Ուստի Յովսէփ իր կնոջ Մարիամու հետ ելաւ Հրէաստանի հիւսիսակողմը Գալիլիոյ մէջ գտնուող Նազարէթ քաղաքէն, գալու համար ի Բեթղեհէմ, որ Երուսաղէմի հարաւակողմը կ'իյնայ. ճամբորդութիւնը երկայն ու զժուարին էր, գրեթէ այն զոր կատարած էր Ս. Կոյմն՝ յայցելութիւն երթալով Նիխաբեթի ի լեւնակողմն. Գալիլիոյ մէջ Նազարէթ անոնց ծննդավայրն էր, ինչպէս կը կարծեն ամէն Հարք ու Մեկնիչք գրեթէ: Եւ ասոր համար Բրիտոս կոչուեցաւ Գալիլեացի և Նազովրեցի, Յովսէփ և Մարիամ Նազարէթի մէջ կը բնակէին նաեւ այդ պահուն: Զգիտցուի սակայն թէ իրենց նախահաւերն ի՞նչ պատճառաւ իրենց ծննդավայրն եղող Բեթղեհէմէն գաղթած ըլլան ի Նազարէթ, Հաւանական կ'երեւի Եւթիմիոսի պատճիռով, Մակարայեցւոց ժամանակ Հրէաստանի մէջ տիրող անդադար պատերազմներէն խուսափելու համար Գալիլիա գաղթած պիտի ըլլան:

Իսկ Մարիամու ևս ի Տաւե եւ յազգի Դաւթի ըլլալը արդէն Մատթէոսի Ա. Գլխոյն ազգայանութեան մեկնութեանը առթիւ ապացուցուած է:

ԳԵՈՐԳ Մ. Վ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

(Շարունակելի)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Լըմիր քահանան որ Գաղղիոյ Գամպրէ թեմին կը վերաբերի, քսան տարիներէ ի վեր այդ կաթողիկէ թեմին Հազարուկ գաւառէն կ'ընտրուէր անդամ Ֆրանսայի Երեսփոխանական Ժողովոյն, բնականաբար իրմէն սպասուելով կաթողիկէութեան զատին անկեղծ պաշտպանութիւնը: Սակայն Լըմիր այդ միջավայրին միջնորդութիւն, քիչ մը մարդկային փառասիրութիւնէն և քիչ մը ալ արդիականութեան ազդեցութիւնէն թոյլցաւ իր սկզբունքը

ներուն մէջ, և բաւական տարիներէ ի վեր թեմական եկեղեցականութիւնը կամեաժող կը վերաբերուէր դէպի այդ պիտիտ քահանայն, որ իր բարեկամութիւնովը — Բլէմանսոյի և նմաններուն հետ, — կը հաստատէր իրեն վերադրուած կասկածները: Վերջերս աւելի բացայայտ սկսաւ քարոզել թէ քահանայութեան և երեսփոխանական ժողովոյ մէջ կրօնք չի դիտուիր, և թէ կառավարութիւնը, նոյն իսկ եթէ կրօնքի ազատութիւնը սահմանափակէ անիրաւ օրէնքներով, իր իրաւունքին մէջ է: Յառաջիկայ տարին սակայն նոր ընտրութիւններ պիտի կատարուին, և Ս. Քահանայապետը ասկէ մէկ երկու տմիւ առաջ հրամայեց որ քահանայ մը երեսփ. ժողովոյ իր ընտրելի ներկայանալու համար հարկ է որ իր վիճակաւոր եպիսկոպոսէն թոյլտուութիւն առնու: Արդ Լըմիւր կը ռահելով որ այս հրամանը իրեն պիտի զլացուի, անաստեց և սկսաւ աստ անդ ճառեր խօսիլ իր ընտրութիւնը ապահովելու համար: Ժողովրդապետները բողոքեցին. հաւաստող-նալք վրդովեցան: Վերջապէս պէտք զգաց վիճակաւորը, — բաց նամակաւ մը — աս անպարտաճանաչ քահանան բացօթեակաւ պէս արգելուլ ընտրելի ըլլալէ. ցոյց տալով որ նա կ'անաստէ Քահանայապետական հրամանին: Նոյն եզր կը յայտարարէ թէ՛ որ եւ իցէ կաթողիկէ մը չի կրնար բտ խղճի, քուէ տալ այդ քահանային, քանի որ այսպէսով կրօնքի օգուտն ու եկեղեցական բարեկարգութիւնը վտանգի կ'ենթարկուի: Յետոյ եզր յորդոր կը կարդայ քահանային որ յաղթէ իր կամակորութեան, վերջիշելով իր երիտասարդութեան հոանդն ու բարեպաշտութիւնը, և թէ քահանայական խիղճն վերջապէս կանգնէ յաղթանակը՝ անիրաւ անձնատիրութեան դէմ:

Որպիսի խորիմաստ դասեր կը պարու-նակեն այսպիսի մոլորութիւններն անգամ... «Ով որ իր անձը կը սիրէ, կը կորսնցնէ զայն» բնաւ Յիսուս...:

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՐ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԵՆԵՐԸ

Չինաստանի հանրապետութեան նորընտիր նախագահ Եուան-Շի-Քայի բարձակալութեան շքեղ հանդէսներուն տոթիւ ակներեւ տեսնուեցաւ նոյն երկրին մէջ կաթողիկէից վայելած յարգը: Չինաստանի կրօնական Պետերուն մէջէն միայն Փէքինի եպիսկոպոս ժառլէն Գերապայծառը անձամբ հրաւիրուեցաւ Եուան-Շի-Քայի կողմէ. եպիսկոպոսական զգեստով ներկայ գտնուեցաւ հանդէսներուն և ընդունուեցաւ նախագահին մասնաւոր ունկնդրութեան, ընկերակցութեամբ իշխան Ցէնկ-Յիանկի:

Փէքինի մէկ թերթը այս մասին կը գրէ հետեւեալը. «Նշանակե՛նք երկու մասնաւոր ընդունելութիւններ որ տեղի ունեցան դեսպանական մարմնոյն շնորհաւորութիւններէն անմիջապէս յետոյ: Առաջին անգամ ընդունուեցաւ կայսերական սան երկայացուցիչը Բու-Լուն իշխանը, որուն բանախօսութեան պատասխանեց Նախագահը: Ապա ընդունուեցաւ ժառլէն Գերապայծառը, որ իբրեւ զլուս Չինաստանի կաթողիկէ Եկեղեցւոյն, ճառ մը արձատեց. որուն, իշխան Լոն-Ցենկ-Յիանկի կողմէ բարգմանուելէն վերջը, Եուան ճախագահը պատասխանեց՝ ցոյց տալով իր մեծ հիացումը նկատմամբ կաթողիկէ կրօնին պատուիրաններուն եւ միանգամայն հաւաստելով թէ՛ ինք կը բաղձայ որ կաթողիկէ Եկեղեցին եւ անոր հաւասացեալները լիակատար ազատութիւն վայելեն Չինաստանին մէջ»:

ԲԱՆԱՄԱՅԻ ՄԷՋ ԱՐՁԱՆ ՄԸ

Բանամայի ջրանցքին մուտքին վրայ յաղթ արձան մը պիտի կանգնուի Վասկոյ Նունէզ Պալպոպի. որ 400 տարի առաջ դրտաւ խաղաղական Ովկիանոսը:

Սպանիական-ամերիկական զրամատուներ Բանամայի հասարակապետութեան պիտի տայ այս նպատակաւ կատարուած հանգանակութեան մը արդիւնքը: Սպանիոյ քաղաքներէն շատերը խանդավառօրէն և առատաձեռն նուէրներով մասնակցած են այս հանգանակութեան:

ՄԱՆՈՒՇԱԿԸ

Օր մը Մարիամ պարեգին մէջ ծառ կու գար
Արեւուն ծագած ասեմ.
Երբ մօտենար ամեն ծաղիկ իրեն կ'ըսէր.
Եկո՛ւր քաղէ գիս:

Ես կը փրփիմ արեւոյտին համբոյրով,
Վարդը կը գոչէր.
Երկինքի դուստր կը համարի զիս մեղուն.
Եկո՛ւր քաղէ գիս:

Շուշանը կ'ըսէր. Եթէ կ'ուզես զարդարել
Մազերդ խաւթեւագեղ,
Օղբ զիս կորօ՛ղ, գիշերը զիս կ'աղամանդէ,
Եկո՛ւր քաղէ՛ գիս:

Յասիոնէն կ'ըսէր. Ես շատ փոքր եմ,
Շափիղայ մըն եմ.
Գոհար կամ ծաղիկի պսակիդ համար
Եկո՛ւր քաղէ գիս:

Արդ ամեն մէկ ծաղիկ, ամեն մէկ կոկոն
Այս հառաչանքը կ'արձակէր.
Ո՛վ Կոյս քեզի համար սիրօքս կը փրփի.
Եկո՛ւր քաղէ՛ գիս:

Ո՞ր ծաղիկը կը քաղէ նա. — Մանուշակը
Յասակաբոյ.
Որովհետեւ դեռ չէ քսած՝
Եկո՛ւր քաղէ՛ գիս:

ԱՆՔՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԱՐՈՒՅԻ ՄԷՋ

Մարտի մէջ ալքողի ներածութիւնը վեր-
ջին տարիներուն մէջ սոսկալի համեմատու-
թիւններ տուած է և ալքողի վաճառանոցնե-
րուն թիւը անհաւատալի կերպով շատցեր է:
1907ին, երբ Ֆրանսան գրաւեց Գաղապլան-
զան, հոն միայն հինգ, վեց ալքողական լմ-
պելեաց խանութ կար մինչդեռ հիմայ անոնց
թիւը 161էն աւելի է: — Կ'երեւի թէ Ֆը-
րանսայի կրօնամարտ կառավարութեան չնոր-
հիւ քաղաքակրթութենէն աւելի ալքողա-
մոլութիւնը մուտք գործեր է Մարտի
մէջ:

ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՄԷԿ ԲԱՐՆԵԱՐԸ

Այս օրերս Ֆրանսայի Նախագահին ներ-
կայութեամբ կատարուեցաւ Բասթօրի հաս-
տատութեան արծաթի յորհլեանը: Այս առ-
թիւ արժան է յիշել թէ այս մեծ Ֆրանսա-
ցին, այս մարդկութեան անմահ բարերարը
համոզեալ և անկեղծ քրիստոնեայ մըն էր:
Բասթօր Ֆրանսական Ակադեմիային մէջ

ընդունուած պահուն խօսեցաւ Անհունին
վրայ. որ է Ապոլուած, այնպիսի ազդու բա-
ցատրութիւններով, որ յուզեց ոչ միայն իր
քրիստոնեայ ունկնդիրները այլ նաեւ նիւ-
թապաշտութեան միտեալները, մեծ մտաւո-
րականները: Բասթօրի անունը այնքան
հռչակուած էր որ նոյն ատեն իր կրօնասիրու-
թիւնը մեծ արձագանգ գտաւ աշխարհիս ա-
մէն կողմերը:

* * * Վերջերս Ս. Հայրը առանձին ունկն-
դրութեան ընդունեցաւ Կաթողիկէ Ասորիներու
պատրիարքը Ամին. Իգն. Եփրեմ Բ.
Բահմանի, որուն կ'ընկերանար նաեւ Ամին.
Ապտ-իւլ-Մսիհ, որ վերջին Մայիս ամսուան
մէջ միաբնեայց հերետիկոսութենէ Կաթո-
ղիկէութեան դարձող ասորի պատրիարքն է,
որուն վրան մեր թերթն ալ ժամանակին լուր
տուաւ:

Այս նորադարձ պատրիարքը, ներկայներն
յուզեղով ըսաւ Նորին Սրբութեան թէ
Արեւելքէն մասնաւորապէս ի Հոռո եկած էր՝
իր հնազանդութիւնը ու հպատակութիւնը
յայտնելու համար Յիսուսի Քրիստոսի Փոխա-
նորդին, Առաքելապետի Յաջորդին. և ասորի
ծէսին մէջ այս կանոնական հպատակութիւնը
յայտնող բառերն արտասանելով, ի վերջոյ
կը խնդրէր Առաքելական Օրհնութիւնը թէ՛
իրեն և թէ՛ նոյնիսկ իրեն հետ Կաթողի-
կէութեան դարձած բոլոր եպիսկոպոսաց, քա-
հանայից և ժողովրդոց համար, կրկնելով իր
հաստատուն առաջադրութիւնը՝ միշտ հաւա-
տարիմ մնալու Կաթողիկէ Կրօնքի, մինչեւ
իսկ ամէն տեսակ վտանգներու գնով:

Ս. Հայրը զգալի ու յայտնի յուզումով
մը ընդունեցաւ նորադարձ Պատրիարքին այս
որոտգին արտայայտութիւնները. և մաղթեց
որ Աստուծոյ Օրհնութիւնը իջնէ անոր և
միւս գարձելոյ վրայ: Եւ ի նշան իր հայրա-
կան բարեկրթութեան Ս. Հայրը ընծայեց ա-
նոր թանկագին մատանի ու գեղեցիկ լանջա-
խաչ մը:

Ամենապ. Բահմանի որոտգեղ չնորհակա-
լութիւն յայտնեց Ն. Սրբութեան իր այս-
քան զիջողութեան համար, և մասնաւոր

օրհնութիւնն մը խնդրեց որպէս զի անով զօրացած կարող ըլլայ ի գլուխ հանել Յակոբիկեանց դարձին մեծ գործը, որոնք այժմեան պարագայից մէջ աշխատի տրամադիր կ'երեւան մտնելու Ս. Եկեղեցւոյ ծոցը:

* * * Ուտինէի Արքեպիսկոպոս Անատոսիոսի Նոյեմբեր 30ին Միլանի մէջ արատքոյ կարգի շահեկան ճառ մը խօսեցաւ Ս. Քահանայապետին անկախութեան ներկայ պայմաններուն վրայ: Իր նիւթն էր «կոստանդինեան Յորելեանը և Եկեղեցւոյ ազատութիւնը»: Նախ ցոյց տուաւ որ Միլանի հրովարտակը, հակառակ առհասարակ իրեն տրուած սնունդն, Եկեղեցւոյ պարզ թոյլտուութիւն մը միայն չի շնորհեր. այլ՝ ազատութիւն մը, որ անոր իրաւունք կ'ուտայ իր առաքելութիւնը կատարելու, իր սաստուածային սահմանադրութեան իրեն հայթայթած սեպհական միջոցներով, զայն կը նկատէ իբրեւ բարոյական մարմին մը՝ օրինաւորապէս հաստատուած իբրեւ իսկական և ազատ ընկերութիւն մը, ճիշդ այնպէս ինչպէս Յիսուս Քրիստոս զայն հիմներ է: Ուտինէի Արքեպիսկոպոսը այս առթիւ իմաստասիրական սքանչելի ճշգրտութեամբ կ'որոշէ ըստոյզ դերիշխանութիւնը Պետութեան, որ իրօք գերիշխան է իր նպատակին վերաբերեալ բաներուն մէջ, և պետութեան զեղծագործ գերիշխանութիւնը, որով սա կ'ըլլայ միակ և բացարձակ ազդիւր ամէն իրաւունքի, ամէն իշխանութեան:

Հանճարեղ Քանախօսը ճառեց երկրորդ մասին մէջ, Քահանայապետին անկախութեան վրայ, առանց որու անմարտելի կը մընայ Եկեղեցւոյ ազատութիւնը: Քահանայապետին ազատութիւնը իրական ըլլալու է և ոչ երեւակայական, ակնհայտ և անկասկած, սնթերի և կստարեալ իր հոգեւոր, տիեզերական և անձնական իր պաշտօնին ամէն գործերուն համար, ոչ-առժամանակեայ, և վերջապէս միջազգային հանգամանք ունեցող երաշխիքներով ճոխացած, քանի որ այս ազատութիւնը ամէն ազգերու կաթողիկէից կը վերաբերի: Այս երաշխիքներուն ապա-

հովման ձեւը, հազար տարիէ աւելի ժամանակամիջոցի մը մէջ, եղաւ Քահանայապետներու քաղաքական իշխանութիւնը: Ուտինէի արքեպիսկոպոսը կը համարի թէ, խնդիրը չէ լուծուած, քրիստոնեայ ըլլալէն դադրած ընկերութեան մը մէջ, ներկայ պայմաններով, որոնք թերեւս աւելի կը դժուարացնեն պահանջել ճշդիւ և բացարձակապէս այս լուծումը, զոր Նախախնամութիւնը ինքնին հայթայթեց նախորդ դարերուն մէջ: Բայց խնդիրը մէջտեղ դրուած է, և հարկ է լուծել քանի որ ներկայ կացութիւնը չ'երաշխաւորեր Քահանայապետին ստոյգ և լիութի ազատութիւնը:

ԿԱՐԵԻՈՐ ԱԶԴ

Յառաջիկայ 1914 տարուան սկիզբը Շարաթաթերթն կը թեւակոխէ իր չորրորդ տարեշրջանին:

Այս առթիւ կը յիշեցնենք մեր պատուական ընթերցողներուն, որ հաճին, որչափ կարելի է շուտ, վերանորոգել իրենց բաժանորդութիւնը:

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՈՐՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ

Նեապոլսոյ Տին Թագաւորութենէն և Վիթերպի նո իրականութենէն հազարաւոր ուխտաւորներ ներկայացան Ս. Քահանայապետին՝ առաջնորդութեամբ իրենց եպիսկոպոսներուն: Ս. Հայրը հաճեցաւ ընդունիլ զիրենք առաքելական պալատին դքսական սրահին մէջ: Ասոնց ընդունելութիւնը տեղի ունեցաւ նոր արարողութեան համաձայն, այսինքն ուխտաւորներուն թույլ տրուեցաւ երգ մը երգել բնկերակցութեամբ քահանայապետական պահակազօրաց նաւագաթումբին, դքսական սրահին յարակից Սուրա Ուէճիւլին մէջ:

Չինու կառավարութեան խնդրանքով Բէքինի եպիսկոպոս Ժաւլէն Գերապոսեանը հանդիսաւոր աղօթքներ մատուց Մայր Եկեղեցւոյն մէջ նոր Խորհրդարանին բացման և Չինաստանի համար ընդհանրապէս:

Այս խնդրանքին համապատասխանելու համար Բէքինի եպիսկոպոսը հրաւիրեց քրիստոնեաները որ

զան եկ Արարիչը երգեն և Ս. Հաղորդութեան օրհնութիւնը ընդունին: Միեւնոյն ատեն իմաց տուաւ Հանրապետութեան Նախագահին թէ առաջարկուած դիտաւորութեան համար հանդիսաւոր պաշտամունք պիտի կատարուի:

Արարողութենէն մի քանի ժամ առաջ արտաքին գործոց նախարար Լոն-Յէնկ-Յիսնկ, նորագործ կաթողիկէ, Մայր եկեղեցին եկաւ. իրմէ քիչ յետոյ հասաւ Հանրապետութեան Նախագահին պատուերաւի:

•• Լուի Վէյեղիի հարիւրամեակը Մոնմարզւոյ Ս. Արտի եկեղեցոյն մէջ կատարուեցաւ, Նոյեմբեր 25ին, ամենաշքեղ հանդէսով: Կը նախագահէր Բարիկ Սքեպիսկոպոս Վսեմաշուք Ամէթ Կարգինալը: Օղէտնի եպիսկոպոս Վէյեառ. Գերապաշտաւ մատոյց Ս. Պատարագը. ներկայ էին քան եւ մէկ եպիսկոպոս, արքեպիսկոպոս և կարգինալ և անհամար բազմութիւն մը ամէն դասակարգի անձերու, որոնք փութացեր էին պատուելու մեծանուն Օրագրողին յիշատակը: Պատարագէն վերջը Արհի. Թուշէ Գերապաշտաւ արտասանեց Լուի Վէյեղիի ներդրումը, ժամ մը ամբողջ հիացմամբ և խորին յուսթիսամբ ունկնդրեց բազմութիւնը այս սքանչելի ծառը:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Դեկտեմբեր 4ին աւագ թեմի քահանայից աստուածաբանական խնդիրներու ժողովը գումարուեցաւ կաթողիկոսարանի սրահին մէջ և շահագրգռական հարցերով զբաղեցաւ:

•• Ա. Յղութեան կարգին մայր-վանատան մատնում մէջ Դեկտեմբեր 4ին, նորընծայական սքեմը առին չորս ուսանող օրիւրդներ: Պատարագեց Արհիպատիւ Յովսէփ Արքեպիսկոպոս Ռոքոսեան, Վ. Պատրիարքական փոխարդը:

•• Դեկտ. 14ին, հինգշաբթի օրը, Կաթողիկոսարանի սրահին մէջ, միօրեայ հոգեւոր կրթութիւն կատարեցին աւագ թեմի Գեր. Գեր. վարդապետները:

•• Անարատ Յղութեան տանը հանդիսապէս կատարուեցաւ աւագ թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ: Նոյն օրը անդի ունեցաւ հ.ա.ե Կատանդինեան յորելեանի փակման արարողութիւնը: Այժման է յիշատակել Յարեանի ներդրութիւնը շահելու համար եկեղեցիները այցելող հաւատացեալներու բազմութիւնը:

Ն Ե Բ Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ի

Կայս. Իրաւէթ: զերման զօրավար Լիման Ճօն Սանէր տնտեսութեամբ հրամարար Ա. զօրաբանակին, անգամ Պատերազմական Բարձր. Խորհուրդին եւ պէս Քննչական Մարմնոյն: Նոյն Իրաւէթի համաձայն, Զօր. Լիման ստացաւ Ճէրիզի (զօրաբանի հրամարար) աստիճան՝ Օսմ. բանակին մէջ:

Այս տնտեսման հետեւաւքով է որ պատերազմական նախարար Իզզէթ փաշա, որ Ֆէրիզ Ֆօն Լիման փաշայի պետը պիտի ըլլայ, բարձրացաւ Ա. Ֆէրիզութեան աստիճանին:

Լիման զօրավարը գերման մարմնոյն գլխաւոր անդամներուն հետ Պարիս պիտի ժամանէ առաջիկայ կերակրի, Դեկտ. 14ին և իր պաշտօնին պիտի ձեռնարկէ Դեկտեմբեր 20ին. Հանդիսաւոր ընդունելութիւն մը պիտի ըլլայ զօրավարին Պատերազմական նախարարութիւնն ապարանք մը վարձեց զինուորական մարմնոյ յորամարդութեան առկա դրուելու համար — ձեւմալ պէշ հրամայեց կարգի դնել Ա. զօրաբանակին վերաբերեալ բոլոր թուղթերը, որ զօր. Լիմանի քննութեան պիտի յանձնուին, պաշտօնի սկսած օրէն:

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Մ. Բուանդալէ ընդունեցաւ Մ. Պարթուրի դահլիճին հրաժարականը:

Նոր դահլիճը վերջապէս կազմուեցաւ հետեւալ կերպով:

Մ. Տումէրկ Վարչապետ ու Արտաքին գործոց նախարար:

Մ. Պիւնկընլի Մարդէն՝ Դատական:

Մ. Ռիւնլէ՝ Ներքին գործոց:

Մ. Գայլօ՝ Նյութից:

Մ. Նուլէն՝ Պատերազմական:

Մ. Մօնի՝ Նոյալից:

Մ. Վիլիսնի՝ Կրթական:

Մ. Մալվի՝ Առևտրական, Թղթատարական ու հեռագրական:

Մ. Ֆեռնան Տալիս՝ Հանրային շինութեանց:

Մ. Ռեմո՝ Երկրագործական:

Մ. Լրպուտի՝ Գաղթային:

Մ. Մօրէն՝ Աշխատութեան նախարար:

Մ. Ռասուլ Ֆէրէր՝ Խորհրդական ներքին գործոց նախարարութեան:

Մ. Մալիսո՝ Խորհրդական Պատերազմ. նախարարութեան:

Մ. ժամ. Առևտրական նաւատորմին խորհրդական:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Դեպքեր եւ սկզբունքներ	785
«Ճալօ»	786
Հին արժէքաւոր վաւերաբնութիւն	790
Ամասիայէն նամակ	791
Լիոնի Կաթողիկէ Իրաւագէտներու համաժողովը	792
Խղձ առ Մարիամ	793
Եօթնեակ Բիսսոնի	794
Մեկնութիւն Ս. Աւետարանի	795
Այլեւայլ	796
Տեղեկագրական	799

ԱՐՏՕՆԱՏԵՐ

ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ

Տպագր. «Արձագանգ» Զարգացման Գրատ. Պարտիսիոն Ե. Կ. Պոլիս

ՏՆՍՐԵՆ-ԽՄԱՎԻՍԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՂԶԻՊԱՇԵԱՆ

Երանելի Տէր Կոմիտաս Քահանային վարքը, առանձին
հրատարակուեցաւ ընտիր թուղթի վրայ, մաքուր տպագրու-
թեամբ և երեք պատմական պատկերներով:

Փափաքելի է որ ամէն Հայ Կաթողիկէ ունենայ այս գե-
ղեցիկ մատենիկը, որուն միակ նպատակն է ծանօթացնել ամէ-
նուն Երանելի Նահատակին գերազանց բարեմասնութիւնները, և,
անոր ջերմեռանդութիւնը ծաւալելով, հրաւիրել ամէնուն վրայ
անոր բարեխօսութեան անզուգական արգիւնքները:

Գին 5 դահեկան, էջ 144 աւուր թղթակազմ

Գրքոյկիս երեք պատկերները, 1. Տէր Կոմիտաս քահանա-
յական զգեստով և իր շիրիմը, 2. Տէր Կոմիտաս դատաւորին առ-
ջև, 3. Գլխատումը, առանձին ալ կը ծախուին. մեծաքանակ գը-
նողներու, գոհացուցիչ գեղջ:

ԿԸ ԾԱՅՈՒԻ «Տարրական Սկզբունք Քրիստոնէական Վար-
դապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ
կիրառութիւնը հրամայեալ Բաղկացած է 136 էջերէ: Գին, ա-
մուր թղթակազմը 2 դահլէն:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Société Anonyme au Capital entièrement versé de K. 430.000.000

Réserve: K. 37.300.000

SIÈGE CENTRAL à VIENNE: I. Herrengasse 8.
avec 12 Agences dans les principaux quartiers de la ville.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE: Place de Karakeuy, Galata

BUREAU DE STAMBOUL: Elkiatib Han

BUREAU DE PÉRA: St. Antoine Han

Succursales et Agences à:

<i>Aussig a/E</i>	<i>Carlsbad</i>	<i>Marienbad</i>	<i>Teplitz</i>
<i>Bielitz-Biala</i>	<i>Friedrich-Mistel</i>	<i>Pilsen</i>	<i>Tetschen</i>
<i>Brünn</i>	<i>Graz</i>	<i>Prag</i>	<i>Villach</i>
<i>Budapest</i>	<i>Klagenfur</i>	<i>Prossnitz</i>	<i>Wr. Neustadt</i>
<i>Czernowitz</i>	<i>Lemberg</i>	<i>St. Poelten</i>	

La Succursale de Galata, l'Agence de Stamboul et celle de Péra s'occupent de toutes opérations de banque, telles que:

Avances en Compte-Courant nanties par des titres ou des effets.

Avances sur Marchandises.

Achat et vente de change sur l'Etranger.

Escompte d'effets.

Emission de traites, chèques, lettres de crédit.

Ordonnancements télégraphiques sur la Turquie et l'Etranger.

Encaissement de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages.

Encaissement d'effets sur la Turquie et l'Etranger.

Ouverture de Comptes-Courants, d'acréditifs simples et documentaires.

Exécution d'ordres de Bourse, garde de valeurs publiques etc. etc.

La Succursale du **Wiener Bank-Verein** à Galata et ses Agences à

Stamboul et Péra ont institué pour faciliter à la petite épargne le placement de ses économies un service de Caisse d'Epargne aux clauses principales suivantes:

Les versements doivent être effectués en Piastres or; il n'est point accepté de versement inférieur à Pst. 50.—

Le Wiener Bank-Verein servira au déposant un intérêt fixé aujourd'hui à $3\frac{1}{2}\%$ p. a. pour toute somme jusqu'à concurrence de Ltq. 1000— et 3% seulement pour l'excédent dépassant ce chiffre.